ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«19» ապրիլի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

_____ Հ. Այունց

ԳԲԽ-46/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի 07.04.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 07.04.2017թ. բողոքով հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու կամ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ կաթսայատան N 1,2 շոգեկաթսաների ԳԿԿ-ի և գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների կատարման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-13/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետնաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 15.03.2017թ.: «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող աշխատանքներ են սահմանվել շոգեկաթսաների, գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների կատարումը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն և «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ն: «Երվադա» ՍՊԸ-ն առաջարկել է աշխատանքը կատարել 3 480 000 ՀՀ դրամով /ներառյալ ԱԱՀ/, իսկ «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ն՝ 4 499 955 ՀՀ դրամով /ներառյալ ԱԱՀ/: Գնահատող հանձնաժողովի 17.03.2017թ. նիստի թիվ 2/1 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ: 17.03.2017թ. «Երվադա» ՍՊԸ-ից պահանջվել է սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում նաև՝ «Տեխնիկական միջոցներ»:

Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է պահանջված փաստաթղթերը, սակայն «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթղթերում Պատվիրատուն արձանագրել է անհամապատասխանություններ:

24.03.2017թ. Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով Ընկերությանը շտկել արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Ընկերությունը, շտկելով անհամապատասխանությունները, 27.03.2017թ Պատվիրատուին է ներկայացրել «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը, որը ընդունվել է Պատվիրատուի կողմից: Որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող պայմանագիր ներկայացվել է ջերմոցային տնտեսության ԳԿԿ-ի, կաթսայի և գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների նախկինում կատարված պայմանագիրը:

Գնահատող հանձնաժողովի 28.03.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, որ Ընկերության կողմից ներկայացված ջերմոցային տնտեսության ԳԿԿ-ի, կաթսայի և գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների նախկինում կատարված պայմանագիրը չի կարող համարվել արտադրությունում կիրառվող շոգեկաթսաների, գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման ոլորտում նմանատիպ:

Սակայն, «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ջերմոցային տնտեսության ԳԿԿ-ի, կաթսայի և գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների շրջանակներում բոլոր սարքավորումներն ու կաթսաները համընկնում են առաջարկվող աշխատանքներում առկա սարքավորումներին և կաթսաներին:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով (այսուհետ նաև՝ Օրենք) և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 64, 65 և 69-րդ կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին բողոքով խնդրել է՝

1. Որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչ սույն բողոքի վերջնական որոշման կայացումը, քանի որ կնքումը զգալի վնասներ կհասցնի Ընկերության և պետության շահերին:

2. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 28.03.2017թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև հաղթող ճանաչել և պայմանագիր կնքել «Երվադա» ՍՊԸ-ի հետ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-46/17 բողոքը քննող հանձնաժողովի 13.04.2017թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, չհապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 18.04.2017թ. թիվ 40-947 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 07.04.2017թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մերժվել է «Երվադա» ՍՊԸ-ի հայտը՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելով անբավարար: Ելնելով ատոմակայանի հատուկ առանձնահատկություններից և կարևորության աստիճանից՝ ատոմակայանի անվտանգ շահագործումը ապահովող համակարգերի (սիստեմների) վրա աշխատանքներ կատարող ընկերությունները պետք է ունենան համապատասխան փորձ:

Գնահատող հանձնաժողովն այն կարծիքին է, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ֆիզիկական անձի առանձնատանը կամ ջերմոցում կաթսայատան շոգեկաթսաների և գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքները մասնագիտական փորձառության առումով բավարար չեն հատուկ նշանակության օբյեկտի հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար: Գնահատող հանձնաժողովը առաջարկել է «Երվադա» ՍՊԸ-ին կազմակերպել հանդիպում նշված աշխատանքները կատարող անձանց հետ՝ մասնագիտական պատրաստվածությունը, մասնագիտական փորձառության հիմնավորման նպատակով ներկայացված պայմանագրերի իսկությունը ճշտելու նպատակով, սակայն մասնակիցը հանդիպմանը չի ներկայացել:

Նկատի ունենալով, որ գնային առաջարկով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցը «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ն էր, որը տարիներ շարունակ բարեխղճորեն և անթերի կատարել է վերը նշված աշխատանքները, գնահատող հանձնաժողովը առավելություն է տվել «Հայկամգազ» ՄՁ ՓԲԸ-ին՝ մասնագիտական փորձառության, պատրաստվածության բարձրաստիճանի շնորհիվ կաթսայատան անխափան աշխատանքը, կայանի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-46/17 բողոքը քննող հանձնաժողովի 13.04.2017թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-46/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-46/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ» ՓԲԸ կաթսայատան N 1,2 շոգեկաթսաների ԳԿԿ-ի և գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ-13/17» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի 2.3 կետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտականփորձառություն,

2) տեխնիկականմիջոցներ,

3) ֆինանսականմիջոցներ,

4) աշխատանքայինռեսուրսներ:

ԸնդորումՄասնակցի՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ***<u>Նմանատիպ են համարվում շոգեկաթսաների, գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների կատարումը:</u>***

(...)

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

3. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է կատարել «ՀԱԷԿ» ՓԲԸ կաթսայատան N 1,2 շոգեկաթսաների ԳԿԿ-ի և գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում և փորձարկում:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն և «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2/1 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Երվադա» ՍՊԸ-ն, իսկ «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ն՝ 2-րդ տեղ, որից հետո պահանջվել է «Երվադա» ՍՊԸ-ից ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

6.«Երվադա» ՍՊԸ-ն, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացրել է Սարգիս Յուրիկի Բաղալյանի և «Երվադա» ՍՊԸ-ի միջև 13.01.2014թ. կնքված N 14/ԱՇԽ-08-01 (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1) և 20.01.2014թ. կնքված N 14/ԱՇԽ-08-03 (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2) աշխատանքների կատարման պայմանագրերը:

7. Պայմանագիր 1-ով նախատեսվել է կատարել Սարգիս Յուրիկի Բաղալյանի սեփականության իրավունքով պատկանող առանձնատան շոգեկաթսաների ԳԿԿ-ի և գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում և փորձարկում, իսկ Պայմանագիր 2-ով՝ Սարգիս Յուրիկի Բաղալյանի սեփականության իրավունքով պատկանող ջերմոցային տնտեսության ԳԿԿ-ի, կաթսայի և գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում և փորձարկում:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.03.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից նորկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող նախկինում կատարված պայմանագրերը գնահատել է անբավարար և առաջնորդվելով Օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով՝ որոշել է թիվ 1 չափաբաժնով որակավորումն հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ առաջադրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ին:

4. <u>ԳԲԽ-46/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 07.04.2017թ. ներկայացրած բողոքը և կից

փաստաթղթերը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 18.04.2017թ. թիվ 40-947 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջի տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 65-րդ կետի 1-ի և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցիներ կայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ նմանատիպ են համարվում շոգեկաթսաների, գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների կատարումը:

«Երվադա» ՍՊԸ-ն որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է Սարգիս Յուրիկի Բաղալյանի և «Երվադա» ՍՊԸ-ի միջև 13.01.2014թ. կնքված N 14/ԱՇԽ-08-01 (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1) և 20.01.2014թ. կնքված N 14/ԱՇԽ-08-03 (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2) աշխատանքների կատարման պայմանագրերը:

Պայմանագիր 1-ով նախատեսվել է կատարել Սարգիս Յուրիկի Բաղալյանի սեփականության իրավունքով պատկանող առանձնատան ***շոգեկաթսաների ԳԿԿ-ի և գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում և փորձարկում***, իսկ Պայմանագիր 2-ով՝ Սարգիս Յուրիկի Բաղալյանի սեփականության իրավունքով պատկանող ***ջերմոցային տնտեսության ԳԿԿ-ի, կաթսայի և գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում և փորձարկում***:

Ընթացակարգի հրավերով նախատեսված և «Երվադա» ՍՊԸ-ի կողմից որպես համանման (նմանատիպ) ներկայացված Պայմանագրերով նախատեսված աշխատանքների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք նույնատիպեն (համանման): Այսպես, Ընթացակարգը հայտարարվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ կաթսայատան N 1,2 շոգեկաթսաների ԳԿԿ-ի և գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների կատարման համար: Ընկերության կողմից ներակայացված համանման (նմանատիպ) Պայմանագրերով կատարվել են Սարգիս Յուրիկի Բաղալյանի սեփականության իրավունքով պատկանող առանձնատան շոգեկաթսաների ԳԿԿ-ի և գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում և փորձարկում, ինչպես նաև՝ ջերմոցային տնտեսության ԳԿԿ-ի, կաթսայի և գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում և փորձարկում:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված Պայմանագրերը հանդիսանում են նմանատիպ (համանման): Հետևաբար Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուն «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պայմանագրերը գնահատելով անբավարար, գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 07.04.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 28.03.2017թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները, մասնավորապես՝ «Երվադա» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը անբավարար գնահատելու և «Հայկազմգազ» ՄՁ ՓԲԸ-ին հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումները:

Ինչ վերաբերում է «Երվադա» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած 2-րդ պահանջին՝ հաղթող ճանաչել և պայմանագիր կնքել «Երվադա» ՍՊԸ-ի հետ, ապա հայտնում ենք, որ << գնումների բողոքարկման խորհուրդը, Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նման որոշում կայացնելու լիազորություն չունի, ուստի այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումներիբողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-46/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան